

Ռ. Ս. ՂԱԶԱՐՅԱՆ, Հ. Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ. Միջին հայերենի բառարան. հ. Ա. (Ա—Կ), Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1987, 420 էջ:

Հայ միջնադարագիտությունն ստացավ ևս մի բառարան, որի կարիքը վաղուց էր զգացվում և որի ստեղծման ուղղությամբ գործնական քայլեր ձեռնարկվել են դեռևս մեկ դար առաջ (Նորայր Բյուզանդացու «Բառգիրք ստորին հայերենի» գործի կազմվել է 1884—1894 թթ.): Հայոց լեզվի զարգացման միջին շրջանին վերաբերող ուսումնասիրությունները նույնպես սկսվել են ավելի քան մեկ դար առաջ (մինչև նախագրգարի կեսերը հայ լեզվաբանական միտքը զստական գրաբարի կանոններից ու բառազանձից շեղվող բոլոր մատենագրական հուշարձանների լեզուն համարում էր «զեղչուկա կամ աստորին»): Այդ ուսումնասիրությունները հանգեցրին «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» և «Կատարյալին» (Երևան, 1972, 1975), որն ընդհանրացրեց մինչև մեր օրերը կատարված աշխատանքը և ուղենշեց հետագա անելիքները: Քերականական օրինաչափությունների բացահայտմանը զուգընթաց, բավական մեծ աշխատանք է կատարվել նաև միջին հայերենի բառազանձի հետազոտման ասպարեզում. Նորայր Բյուզանդացու հիշյալ բացատրական բառարանից հետո կազմվեց Հ. Կարստի ստուգաբանական բառարանը «Wörterbuch des Mittelharmenischen» (Մաշտոցի անվան Մատենադարանի դիվան, թղթ. 249—254), Ցավոք, մեծածավալ և աշխատատար բազմաթիվ գործերի նման՝ երկու բառարանն էլ անկատար էին, ըստ այդմ էլ հեղինակների մահից հետո դատապարտվեցին ընդմիջյալ անտիպ մնալու ճակատագրին: Դրա պատճառներից մեկն էլ այն է, որ այդ բառարանների ստեղծումից հետո կատարվել է մեծ աղբյուրագիտական ու քննադատական աշխատանք՝ լույս են տեսել XI—XVIII դդ. տասնյակ աղբյուրների նոր կամ առաջին հրատարակություններ, որոնցից շատերին կից տպագրվել են նաև փոխառյալ, սակավ գործածված և միջինհայերենյան բառապաշարի ցանկեր կամ քննություններ: Այսինքն՝ «միջին հայերենի բառապաշարի հավաքման և ծագումնաբանական վերլուծության գծով հայագետների կողմից մեծ աշխատանք է կատարված, աշխատանք, որը հնարավորություն է ընձեռում դիմելու հետագա քայլերին» (Ակնարկներ, Ա, էջ 172):

Գրախոսվող բառարանն այդ քայլերի շարքում բավական կարևոր և զնահատելի աստիճան է՝ ըստ էության ընդհանրացնում է միջին հայերենի բառագիտության ասպարեզում մինչև այժմ կատարված «մեծ աշխատանքը»: Լեզվաբանական բազմապիսի խնդիրների պարզաբանմանը ծառայելուց, բացի և՛ նրանից: առաջ, Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի տեղաշարժաշխատանքի այս պտուղը պետք է լինի XI—XVIII դդ. հայ մատենագրության հուշարձանների հետազոտությանը ու հրատարակությանը զրադվող աղբյուրագետների և քննադատների կարևոր տեղեկատվություն: Ուրախությամբ և շնորհակալությամբ արձանագրելով այս փաստը, ցանկանում ենք կազմողների և ընթերցողի ուշադրությունը հրավիրել մի շտրք դիտարկումների վրա՝ հուսալով, որ դրանք նկատի ունենալու դեպքում բառարանի երկրորդ՝ հրատարակության ընթացքում գտնվող հատորը զերծ կլինի մի քանի թերություններից:

Գիրքն սկսվում է «Բառարանի կառուցվածք» մուտքով (էջ 3—4), որին հաջորդում է «Ակնարկաղբյուրները և նրանց համառոտագրությունները» ցանկը (էջ 5—10. այստեղ աղբյուրներն ունեն 1—192 համարները, որոնք Լրբեմն կրեթվեն մեր հետագա շարադրանքում, առանց խորագրերը նշելու): Հաջորդում է «Գործածված համառոտագրություններ»-ի փոքր ցանկը (էջ 11), ի վերջո գալիս է բառարանը (էջ 12—419):

Ակարից ևեթ ասված է, որ «բառարանն ընդգրկում է XII—XVI դդ., մասամբ էլ XVII դարի ինքնուրույն և թարգմանական երկերում վկայված բառերը, ոճերն ու դարձվածքները» (էջ 3): Ժիշտ է, հայոց լեզվի պատմության պարբերացման ժամանակակից տեսության համաձայն՝ միջին հայերենին հատկացվում են XII—XVI դդ., բայց ինչպես մեր լեզվի զարգացման գրավոր փուլի հին շրջանը՝ գրաբարը շարունակվեց ոչ միայն XI դարից հետո, այլև՝ ընդհուպ մինչև XIX դարի վերջ, նույնպես և միջին հայերենի ու նրա բառապաշարի կյանքը XVI դարի վերջին շավարտվեց. այն շարունակեց գոյատևել նաև հետագա առնվազն երկու հարյուրամյակի ընթացքում, նրանով զրվեցին մատենագրական նոր երկեր և հիշատակարաններ, ավելին՝ նրա բառապաշարն. այսօր էլ դրանց

Վրացական լեզուի քերականության և լեզվի պատմության պատմության տեսությունների ամփոփումը շատ կիրառելի է քերականական երևույթների վերաբերմամբ, քան՝ բառապաշարի, որի նկատմամբ, մեր կարծիքով, երկնային սկզբունք պետք է համարվեր հայ դրականության պարզեցման տեսությունը, ըստ որի V—XIII դդ. համարվում են հին կամ մատենագրական շրջան, որի հուշարձանները պահպանվել են հիմնականում միջնադարյան ձեռագրերի մատյաններում, որոնք Պատահական չէ, որ ՀԱՍՏ ԳԱ լեզվի ինստիտուտում այժմ առանձին թեմաների ձևով հետազոտվում է XVII, XVIII և անգամ XIX դարի «գրաբարո» Մի խոսքով, համոզված ենք, որ XV—XVIII դդ. բաղադրված աղբյուրների բառարանում գրախոսվող բառարանը կարող էր մեծապես շահել (անհասկանալի է, օրինակ, թե ինչու XVII դարի առաջին քսանամյակի ձեռագրական հիշատակարանների բառամթերքը համարվել է գործածելի, իսկ երկրորդ քսանամյակի հիշատակարաններին՝ ոչ)։

Բառարանը շուրջ առաջարան կամ ներառություն, մինչդեռ դրա կարիքն անպայման կար՝ գոնե համառոտ, ընդհանուր գծերով գնահատելու համար միջին հայերենի բառագանձի հետազոտության ուղղությամբ լեզվաբանների և աղբյուրագետների մի քանի սերնդի այն մեծ աշխատանքը, որի մասին ակնարկեցինք և առանց որի անհնար կլինեին ներկա բառարանի ծնունդը։ Ի դեպ, սկզբում տեղեկացված է, որ «Բառարանում փոխառյալ բառերի առաջին անգամ տրվող ստուգաբանությունները կատարել է Ռ. Ս. Ղազարյանը» (էջ 4), բայց ուրիշների ստուգաբանությունների զատելու համար անհրաժեշտ էր այդպիսի բառերը ներկայացնել տարբերիչ որևէ նշանով, ասենք՝ աստղանիշով։

Չկա նաև օգտագործված աղբյուրների տեսություն և նրանցից յուրաքանչյուրի համառոտ բնութագրություն. առաջարանի այս անհրաժեշտ հատվածի գերը չի կատարում նաև «Սկզբնաղբյուրները և նրանց համառոտագրությունները» ցանկը։ Այս պակասի պատճառով բառարանի գործածությունը բավական դժվարանում է, Այսպես, ՄԱԳ—Մաղաթիա արեղա, Պատմություն վասն ազգին նկարագրող, Պետերբուրգ, 1860» համառոտագրությունից ընթերցողը քիչ պատկերացում է ստանում աղբյուրի մասին։ Ավելին՝ 1860 թ. հետո (1940-ական թթ.) հայ աղբյուրագիտությունը պարզել է, որ այդ երկի իրական հեղինակը Գրիգոր Ակներցին է, այլև որ այժմ գոյություն ունի այդ բնագրի՝ հեղինակային ձեռագրից կատարված և ըստ ամենայնի ստույգ հրատարակությունը (Գրիգոր Վրդ. Ակներցի, Պատմություն լաթարաց, Բ տպա-

գրություն, Երուսաղեմ, 1974), որը, սակայն, կազմողների ուղղորդողից դուրս է մնացել։

Եթե այս կարգի տպագրի աղբյուրների մասին ընթերցողը կարող է անհրաժեշտ գիտելիքներ քաղել նաև դասագրքային ու հանրագիտարանային գրականությունից, ապա անտիպ՝ ձեռագիր աղբյուրների դեպքում դա շատ ավելի դժվար է։ Այս հանգամանքը պետք է պարտավորեցնի հեղինակներին աղբյուրների տեսություն ղեկ գոնե երկրորդ հատորի սկզբում։

Մեր գիտական բառարանագրության մեջ վաղուց և ինքնաբերաբար ձևավորվել է աղբյուրների համառոտագրման մի ավանդույթ, որ կիրառվել է նոր հայկազյան և այլ բառարաններում, և ավելի հիշյալ կլինեին համառոտագրություններում պահպանել այդ ավանդույթը։ Մինչդեռ գրախոսվող բառարանի համառոտագրությունները կազմված են կարծես թե գրքերի խորագրերի լուսանկարական վերատպագրման եղանակով։

Խորագրային բառերի սկզբնատառերի գումարմամբ համառոտագրելու այս լավարանական լուսանկարական եղանակի պատճառով աղբյուրների ցանկում նույն հեղինակի տարբեր գործերը թվարկված են իրարից բավական հեռու։ Հովհաննես Սարկավագի երկերն ունեն 12, 82, 128 համարներ, Հովհաննես Երզնկացուն՝ 21, 79—80, 115, 122 և այլն։ Սա, իհարկե, սկզբունքային թերություն չէ, սակայն բառարանի կառուցվածքը այրենական է, որի համեմատ էլ պետք էր լավարկել նրա աղբյուրները։

Բառարանի աղբյուրների մեջ կան քրեստոմատիաներ՝ 10 անուն (№ № 28, 42, 50, 74, 76, 77—78, 85—86, 89), նույնաբնույթ, սակայն տարբեր դարաշրջանների վերաբերող աղբյուրների ժողովածուներ՝ 22 միավոր (№ № 43, 53, 72, 75, 83, 87, 90, 91, 108—109, 114, 155, 163, 179, 185—188) և ուսումնասիրություններ, որոնց շարադրանքի ընթացքում կա՞մ վերջում՝ որպես հավելված, հրատարակված են ուսումնասիրությանն առնվող, կրկին տարբեր ժամանակների վերաբերող մանր և մեծ բնագրեր՝ 9 գիրք (№ № 15, 30, 41, 93—95, 154, 170, 183)։ Որինակ, «Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա», Երևան, 1979» ժողովածուն, ընդգրկելով հանդերձ V—XVIII դդ. հուշարձաններ, բառարանում ներկայանում է միանշանակ ՀԲԲ համառոտագրությամբ. «Հայ միջնադարյան պատմական ողբեր, Երևան, 1969» գիրքը նույնպես պարունակում է տարբեր ժամանակներում և տարբեր տեղերում ստեղծված աղբյուրներ, բայց ներկայանում է «Ողբ» ընդհանուր պայմանանիշով։ Նույն ձևով արտահայտված են նաև Ս. Ավագյանի «Վիճական արձանագրությունների բառարանություն, Երևան, 1978» ուսումնասիրության

104. ՄԳԴ: Լմբ. առ Լեոն (Դուռայ)—134. ՆԼ, Բղթ.: Ե. Նոնս. (Խնձան)—150. ՆՇՈՆ: Յովն. Դառն. (Ժեթ)—11. ԱՅԳ: Վրչն. պտմ. (Կաթողիկոսի)—176. ՎՊՏ: Վրչն. Ել. (Կակազ)—171. ՎԱԼ: Գր. Տղ. Ու. (Աղենային)—34. ԳՏ: Ե. բղթ. (Բժժագործություն)—143. ՆՇԹԸ և այլն:

Նույն ձևով 2. Անասյանի «Հայկական մատենագիտություն» Ա հատորի (Երևան, 1959) միջնորդությամբ ներկայացվում են Երազման, Ախտար, Աղաիտ աղբյուրները (տե՛ս Անմուխ, Աշխատ, Թէպիթ), սակայն 2. Անասյանի մեծածերք աշխատության մեջ ընդամենը նկարագրված է վերջիններիս մեկ-երկու օրինակ, բերված են աղբյուրների գլխացանկերը, առաջարան-հիշատակարանները (եթե կան) և այլն: Պետք է վստահ լինել, որ եթե բառարանի կազմողները մատենագիտական հոգվածները դիտելին ոչ թե որպես աղբյուր, այլ՝ աշխատանքի ելակետ, ապա ընկալող գրքի բառացանկն ավելի հարուստ կլինի, իսկ բառահոգվածները՝ ճոխ:

Աղբյուրների մի մասն էլ հրատարակվել է Նոր Հայկազյանի տպագրությունից հետո, բայց մեր բառարանում օգտագործվել է կրկին միջնորդաբար. Կանոնագիրը հայոց, հ. Ա—Բ (Երեւան, 1964, 1971), Հովհաննես Երզնկացու Քերականություն (Լոս Անճելես, 1983)—տե՛ս Գոիճ և Գաղթալը բառերը: Ի դեպ, օգտագործված չեն նաև Հովհաննես Երզնկացու և Առաքել Սյունեցու Քերականությունների հրատարակությունները (Լոս Անճելես, 1984, 1982), մինչդեռ վերջին երեք գրքերն օժտված են նաև բառացանկերով:

Սակայն Նոր Հայկազյանի միջնորդությամբ օգտագործված աղբյուրների մեծ մասը դեռևս անտիպ է (Թվարկվող աղբյուրների մոտ, փակագծեր, նշում ենք գրախոսվող բառարանի համապատասխան բառը). Վարք հարանց (Դամ), Ներսես Լամբրոնացի, Մեկնություն Սաղմոսի (Գաղանակ), Վանական, Մեկնություն Հորա (Խարամ), Վանական, Գիրք հարցմանց (Խոտմուն), Վարդան Արեւելցի, Մեկնություն Սաղմոսի (Կազմոց), Վահրամ Բարունի, Ճառի Հայտնություն (Բաշին) և այլն: Բայց այս կարգի աղբյուրների բազմաթիվ ընտիր օրինակներ էլ պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանի հայերեն ձեռագրերի ամենաճոխ հավաքածուի մեջ: Եթե հաշվի առնենք, որ XI—XVI դդ. աղբյուրներից Նոր Հայկազյանի լազմողները քաղել են միայն «ինչ ինչ» կամ «չանի մի ևեթ» բառեր (որովհետև, ինչպես գիտենք, դրանց լեզուն նրանք համարում էին ուսման օրինակ), ապա կարող ենք վստահորեն պնդել, որ գրախոսվող բառարանը շատ է տուժել այդ աղբյուրներին անմիջաբար դիմած լինելու պատճառով: Մյուս կողմից էլ՝ նման աղբյուրների ունեցած հարուստ բառամթերքը

դեռևս մնում է չհրապարակված: Քանի որ այդ աղբյուրների մեծ մասը եկեղեցական է՝ դավանաբանական, մեկնողական, ծիսական և այլն, և նրանց ճշող մեծամասնությունը դեռևս անտիպ է, ուստի այս բառարանի կազմման ժամանակաշրջանն այդ աղբյուրների բառամթերքի վերհանման լավագույն առիթն էր, որո՞ցավա՞ր, չօգտագործվեց:

Շատ պետք է ակոսոսալ հատկապես մեր մեկնողական հարուստ գրականության հուշարձանների լավագույն աղբյուրիկ օգտագործման համար (ընդամենը 6 աղբյուր՝ № № 102, 115—116, 118, 121, 135, 171). բնութով և նպատակադրմամբ սրանք այն ուսուցողական-դասագրքային երկերն են, որոնք մեր իրականության մեջ հորինվել են առավելագույն XI դարից սկսած և նպատակ ունենում վանական ու եկեղեցական դպրոցների աշակերտների (սուսումնասիրման կանոնացանկ) համար պարզ, հասկանալի դարձնել Աստվածաշնչի և իմաստասիրական հին աշխատությունների խթին հատվածները և գործածությունից դուրս եկած ոսկեդարյան բառերն ու արտահայտությունները: Հատկապես վերջին հանգամանքի շնորհիվ ստեղծվեցին բազմաթիվ բառական մեկնություններ, մեր օրերի բնորոշմամբ՝ բացատրական բառարաններ: Նույնպիսի մեծ արժեք ունեն նաև ինքնուրույն և թարգմանական իմաստասիրական երկերի ուղմիշնադարյան բազում մեկնությունները, որոնք նույնպես գրախոսվող բառարանում համարյա արտացոլված չեն (միայն երկուսը՝ № № 127, 180): Ցավալի է նաև հայ միարարական հարուստ մատենագրության սակավ օգտագործումը, որովհետև տվյալ հոսանքի ներկայացուցիչներն իբրև կանոն առաջնորդվում էին ժողովրդին պարզ, հասկանալի գրելու և խոսելու հիմնական սկզբունքով: Նույնպիսի ակոսոսելի է նաև տառնյակ քարոզչությունների մեկի (№ № 37—38—Գրիգոր Տաթևացի) օգտագործված լինելը, քանի որ այս բնույթի գործերի մեջ աստվածաշնչական երևույթները, իրողություններն ու սակավ գործածական բառերը բացատրվում էին կենդանի առօրյայից, իրականությունից և կենցաղից վերցված օրինակներով, նույն առօրյայի ու կենցաղի մեջ օգտագործվող ոչ գրական (խոսակցական) միջին հայերեն բառերով ու արտահայտություններով:

Բացառությամբ բժշկական, գյուղատնտեսական և այս կարգի այլ աղբյուրների (Հերացի, Ամիրդովլաթ, Իշու, Գրիգորիս, Գիրք վաստակոց, Բժշկարան Հոռ և այլն), մյուս միջնադարի համար ավելի տարածված և կիրառված ժանրերի անգամ ամենաբեղմնավոր մատենագիրները բառարանում ներկայացված են հիմնականում մեկական, երբեմն՝ երկուական ստեղծագործությամբ: Անգամ լավագույնս օգ-

տագործված հեղինակների կրկերի մեծ մասը չի բառաքաղվել: Կյսպես՝ ներսես Լամբրոնացու (№ № 118, 133—138) չեն օգտագործվել նրա բազմաթիվ մեկնությունները, լուծմունքները և թարգմանությունները: Ամենից շատ ներկայացված հեղինակներից է Գրիգոր Տաթևացին (№ № 35—38), բայց նրա տասնյակ մեկնություններից ու լուծմունքներից որևէ մեկը նույնպես այստեղ օգտագործված չէ:

Կարելի է թվարկել վրիպած բազմաթիվ հեղինակների և նրանց կրկերի անունները, բայց եզրափակենք. բառարանում ներկայացված է օգտագործվող արժանի աղբյուրների քառորդից էլ պակաս մասը:

Ցավոք, կան նաև օգտագործված աղբյուրների թյուրմացարար առաջացած շփոթներ: Այսպես. Հովհաննիսիկ Մարեցու ժամանակագրությունը հրատարակվել է շոբս անգամ. երկուսը Սամվել Անեցու և Առաքել Դավրիժեցու երկերի հետ միատեղ, մեկը՝ 1859 թ., «Ճոռացող» հանդեսում, շորթորդը՝ Մանր ժամանակագրությունների 2-րդ հատորում (էջ 240—249): Վերջին երկուսը բառարանի մեջ օգտագործված են համապատասխանաբար ՅՎՊ և ՄԺ, Բ համառոտագրություններով: Այդ պատճառով էլ, օրինակ, Կարմրազգեստ բառահոգվածի մեջ այս երկու հրատարակություններից բերված վկայությունները ներկայանում են որպես տարբեր ժամանակների տարբեր աղբյուրների մեջ բառի կիրառման օրինակներ:

Նույնպես իբրև տարբեր աղբյուրներ են մատուցված՝ ՄԼԳԳ—Մարտիրոս Լևհացի, Գիրք զաւազանաց, Մանր ժամանակագրությունների Բ հատորում (էջ 173—208) նույն աղբյուրից քաղված՝ Թարգմանիչ ներսես Պալիանեցի անունով հրատարակված հատվածները և Նոր հայկազյան բառարանից՝ Մարքին համառոտագրությանը բերված բազմաթիվ բառերը (տե՛ս Գոռոշ, Զատկանալ, Զատկատոմար և այլն): Օգտագործվել է Ա. Մնացականյանի կազմած «Հայ միջնադարյան հանելուկներ (Երևան, 1980)» ժողովածոն, միաժամանակ՝ «Ներսես Շնորհալի, Հանելուկներ (Երևան, 1968)» դիրքը, առանց նկատելու, որ երկրորդի նյութն առաջինի մեջ արդեն կա:

Լիովին ուրախալի և ողջունելի է այն փաստը, որ բառարանի համար օգտագործվել են նաև ձեռագրացուցաներ (№ № 83, 185—188), սակայն, ստիպված ենք նշել, որ Հ. Անասյանի «Հայկական մատենագիտության զույգ հատորների առաջարկներում ներկայացված «Ձեռագրացուցաներ» ընդարձակ ցանկում թվարկված են մինչև 1975 թ. հրատարակված 355 ձեռագրացուցակ, իսկ այստեղ գործածված է միայն հինգը: Հասկանալի է, որ ձեռագրացուցակներից բաղվել է հիմնականում հիշատակարանների

բառարանները. բառարանում օգտագործված են նաև հիշատակարանների տպագրված բոլոր հատորները, նաև՝ XV դարի հիշատակարանների անտիպ հատորը (XIII դարինը ևս բառաքաղվել է չապագրված ժամանակ): Թեև 1984 թ. այն արդեն հրատարակված էր, բայց այստեղ ներկայացվում է իբրև անտիպ: Սակայն հատկապես Գ. Հովսեփյանի և Լ. Խաչիկյանի կազմած հատորների տպագրությունից հետո լույս են տեսել տասնյակ ծավալուն և արժեքավոր ձեռագրացուցակներ, որոնց հաբուտ նյութն այդ հատորների մեջ չի մտել. հիշենք միայն մի քանիսը՝ Վիննայի հավաքածուի ցուցակի 2—3-րդ հատորները (Վիննա, 1963, 1983), Սրուսագեմի հավաքածուի 9 հատորները (Երուսաղեմ, 1966—1979): Բուրովին անհասկանալի է նաև այն, թե ինչու Բ. Զուգասդյանի կազմած «Հայերեն ձեռագրեր Ամերիկայի Միացյալ Նահանգներում» (Բանբեր Մատենադարանի, հ. 12, Երևան, 1977, էջ 219—277)՝ 42 միավոր պարունակող ցուցակը բառաքաղվել է, բայց չի օգտագործվել Ա. Մանճյանի «A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, Berkeley, Los Angeles, London, 1976. XIX, 863 էջ»՝ 180 ձեռագիր բնագրերից մանրամասն ձեռագրացուցակը:

Անգամ թուցիկ հայացքով բառարանը թերթիս աչքի է զարնվում նրա մի յուրահատկությունը. բառերի մեծ մասը հաստատված է մատենագրական եզակի վկայությամբ, այսինքն՝ ներկայացված է մի օգտագործմամբ: Հ. Աճառյանի իրավացի ընդդեմում, այսպիսի բառարանների վկայակոչումները «երկու նպատակ ունեն. նախ որոշել բառի գործածության ժամանակը, երկրորդ՝ ճշտել նրանց նշանակության ներությունները» (Արմատական, Ա, էջ 4): Միջին հայերենի դեպքում սրանց ավելանում է ևս մեկը. պարզել Հայաստանի տարբեր շրջաններում միևնույն բառի ստացած տարբեր նշանակությունները: Ըստ այսմ, մեկական վկայությամբ ամրապնդված բառահոգվածները թերաբժև են, ավելին՝ նրանց գործածականությունը դառնում է կասկածելի, որովհետև մի օգտագործումը կարող է համարվել նաև պատահական: Մինչդեռ նույն այդ բառերն այսօր էլ լայնորեն գործածվում են խոսակցական հայերենում և մեր բարբառներում: Ստուգումը ցույց տվեց, որ այդպիսի բազմաթիվ բառերի գոնե երկրորդ (երբեմն՝ շատ ավելի) օգտագործում արձանագրված է հենց գրախոսվող բառարանի աղբյուրների մեջ: Բերենք մի քանի օրինակ. Աստղատ—բերված՝ Հովհ. Երզնկացի, 159, չրերված՝ ՄԺ, Ա. Անհատակ—բերված՝ Սմբատի Դատաստ. 105, չրերված՝ Յրիկ, Դիան, 417,

Առգ—բերված՝ ՄԺ, Ա, 171, շրված՝ ՄԺ, Բ (շորս վկայություն). Բազազ—բերված՝ ԺԴ դ. հիշատ. 361, շրված՝ ՄԺ, Ա և ՄԺ, Բ. Բա—հաղթ—Բերված՝ Անհերցի, Պատմ. 32, շրված՝ ՄԺ, Բ (երկու վկայ.). Բուրջ—բերված՝ Դիվան հայ վիմագր. Ա, 2, շրված՝ ՄԺ, Բ (մի բանի վկայ.). Դուրայ—բերված՝ Քուշակ, 210, շրված՝ ՄԺ, Բ. Դալալ—բերված՝ ԺԴ դ. հիշատ. 244, շրված՝ ՄԺ, Բ. Դոշամայ—բերված՝ ԺԴ դ. հիշատ. Ա, 427, շրված՝ ՄԺ, Բ, 486. Եմփաղ—բերված՝ Ամիրզոնվաթի օգուտ բժշկ. 414, շրված՝ ՄԺ, Բ, Ձէֆէ—բերված՝ Ա. Չոպանյան, Հայրեններ, 426, շրված՝ Հափ. Թլկուրանցի, Ընթերց—բերված՝ ՄԺ, Բ, 57, շրված՝ նույն գրքի ևս 11 վկայ. Խազազ—բերված՝ ԺԴ դ. հիշատ. Բ, 253, շրված՝ Յրիկ, Դիւան, Կապալի—բերված՝ վաստակոց, 97, շրված՝ Յրիկ, Դիւան. և այլն (մատնանշված գրքերի մեջ բառացանկերի գոյությունը մեզ աղատում է վերնագրված վկայությունների էջերը միշտ նշելու պարտավորությունից)։

Մի վկայությամբ բերված բառահոգվածները կազմում են շնչող մեծամասնություն, նրանցից մի փոքր պակաս ևն երկու վկայություն ունեցողները, որոնք ևս հնու ևն բառերն իրենց ժամանակային ու տարածական գործածության մեջ ներկայացնելու պահանջից։ Եթե բառարանը համեմատենք իր բոլոր աղբյուրների հետ (համեմատենք ենք միայն շորսի հետ), ապի պարզ կդառնա, որ այն թերակատար է։ Գուցե այս դիտողությանն առարկեն և ասեն, թե դա արվել է բառարանի ծավալի անհարկի մեծացումից խուսափելու համար։ Սակայն հայագիտության և ընդհանրապես միջնադարագիտության մեջ աղբյուրներն ու բառարաններն այն հրատարակություններն են, որոնք պետք է տպագրվեն ոչ թե նախապես արված սխալ պլանային հաշվարկների համեմատ, այլ՝ այսօրվա գիտության պահանջների բարեխիղճ կիրառմամբ ստացվելիք ծավալների համաձայն։

Ուղղագրական տարբերակներն ու նրանց հղումները ևս, մեր համոզմամբ, ներկայացված են սխալ սկզբունքով. «Բառի գրագրական ձևերը, եթե առանձին վկայված չեն, տրվում են մեկ բառահոգվածում՝ գլխաբառից անսխալապես հետո» (էջ 3), ապա բերվում է հետևյալ օրինակը. «Խաղաղություն, խարտեշուկ, խարտեշուկ»։ Այս բառահոգվածում, իրոք, գլխաբառին և չլիքված բառաձևերին հաջորդում է բաշատությունը, ապա՝ մի եզակի վկայություն, որտեղ բառն ունի խաղաղություն ձևը. որքանով է ճիշտ պատմական բառարանում չվկայված՝ որեւէ սկզբնաղբյուրում շարձանագրված բառաձև բերելը (առանձին վկայված չենք արտահայտությունից դժվար է ենթադրել, թե դրանք ընդ-

հանրապես ինչ-որ տեղ վկայված են, գոյություն ունեն, բայց բառարանն այդ վկայությունները չի բերել)։ Նույն ուղղագրական տարբերակները «անկախ գործածության դեպքում բերվում են որպես գլխաբառեր՝ տե՛ս հղումով. Օրինակ՝... Աթաբեկ, տե՛ս Աթաբեկ։ Աթապեկ, տե՛ս Աթաբեկ։ Աթապեկ, տե՛ս Աթաբեկ։ Աթապեկ, տե՛ս Աթաբեկ» (էջ 3)։ Այս օրինակից պետք է ենթադրել, որ հիմնական տարբերակ է գիտվել Աթաբեկ ձևը, իսկ մյուս երեքը այբբենական շարքի իրենց տեղում դրված են սոսկ հղման ձևով, սակայն վերջիններս բացի հղումից (որը փոխարինում է բառի ստուգաբանությանն ու բացատրությանը), ունեն երկուական մատենագրական վկայություն, այսինքն՝ ինչպես ասված է, ուղղագրական ձևը դարձված է գլխաբառ։ Հետ որում, հիմնական դիտված ձևին վերաբերող հոգվածում մյուս տարբերակների հիշատակությունը՝ հղումը չկա։ Ավելի ճիշտ կլիներ հիմնական դիտված (այս դեպքում՝ Աթաբեկ) ձևից հետո՝ նույն հոգվածում գրվելին թե՛ տարբերակները և թե՛ նրանց վերաբերող վկայությունները, իսկ երկրորդական համարված ձևերի տեղերում թողնել վերին միայն հղումները. «Աթաբեկ, տե՛ս Աթաբեկ»։ Անհավան թվացող այս սխալ սկզբունքի պատճառով այժմ հնարավոր չէ հաշվել բառարանի պարունակած բառերի իրական քանակը։

Որոշ ստուգումներից հետո ցավով համոզվեցինք, որ բառարանն ամբողջությամբ չի ներկայացնում նաև իր օգտագործած աղբյուրների բառամթերքը։ Օրինակ. «Մանր ժամանակագրություններ» զույգ հատորների մեջ հրատարակված բնագրերի ունեցած տասնյակ փոխառյալ բառեր չեն քաղվել, բայց համարենք, որ դրանք վերաբերում են բառարանի ժամանակագրական սահմաններից հանդիսավորու թոգված՝ XV—XVIII դդ. աղբյուրներին։ Սակայն նույն պատկերը պարզվեց նաև Յրիկի (XIII դար), Հովասափ Սեբաստացու (XVI դար) և Հովհաննես Թլկուրանցու (XV—XVI դդ.) երկերի հրատարակությունների հետ բառարանը համեմատելիս։ Թլկուրանցու չեն վերցվել հետևյալ բառերը. Ալվար (համաձայն, բավարար, գոհ), Անախում, Անախուն (անհաշիվ), Աշխարհիանցում (աշխարհ հիացնող), Գաւ (պատերազմական շեփոր), Գեախ (ժամանակ), Գեղել (գեղեցկացնել), Ելուկ (ծառի բողբոջ կամ արմատի մոտ բուսած էլուղ), Զանեզան (բազմաշնորհ), Խերիաթ (բարիք), Խարապ (միասին՝ հետ իրերաց), Կլափ (ծնոտ)։

Յրիկի Դիվանից չվերցված բառերն ալվելի շատ են, ուստի բավարարվենք միայն աստուկ սկզբունքով. Ալուիկ (այլ, նոր), Աղբոսոց (աղբանոց), Աղիպաթ (վախճան, հետևանք), Աղկ (վատ, անարգ), Ան (կամ), Անթել (թըռ-

լել), Անշուռափի (հանդիստ, խաղաղ), Անուշան (թաղցր, համեղ), Անուշ կանչել (գինի խմողին անուշ մաղթել), Անօթ նայել (ծուռ մորթով նայել):

Սա ցույց է տալիս, որ ապագայում ես բառագրական և բնագրագրական աշխատանքների ընթացքում արվելիք ստուգումների համար հաճախ հարկ է լինիլու դիմել բուն սկզբնաղբյուրներին:

Բառարանում կան նաև թյուրիմացարար առաջացած՝ կեղծ բառեր (այս ուղղությամբ հատուկ ստուգումներ չենք կատարել, հիմնականում ակամա նկատել ենք մեզ լավ ծանոթ մի աղբյուրի՝ Մարտինոս Օպավացու Գավազանագրքի—Ձ 110. ՄԼԳԳ—ձեռագրի թյուրբարձրանումները): Այսպես.

«Ներեզ, տե՛ս Երայ: Եւ գնացել րնակէր յառնառի միոշ իր վայրի երէզ (ՄԼԳԳ, 147)»: Այս աղբյուրը բառաքաղվել է Մաշտոցի անվան Մատենադարանի Ձ 3079 ձեռագրից. որտեղ բառն իսկապես այդպես է, սակայն այս երկի թարգմանիչ Ներսէս Պալիանկեցի ինքնագրում՝ Վենետիկի Մխիթ. մատենադարանի Ձ 1578 ձեռ. (99թ) և Մաշտոցի անվան Մատենադարանի (ՄՄ) այլ օրինակներում (ձեռ. Ձ 4347, 151թ, Ձ 7841, 246թ) բառն ունի սովորական երէ ձևը, այսինքն երէզ բառ գոյություն չի ունեցել:

«Ջզուանցանել, պր. Ջզվեցնել, զզվանք պատճառել՝ առաջացնել: Եւ զզուանցանէին մեռնալք այսր և անդր անձինք իրր Գճ արս և կանայս (ՄԼԳԳ, 195)»: Այստեղ վկայությունը քաղվել է սխալ կազմով, դրա պատճառով էլ կատարվել է սխալ բառանշատում. պետք է բերվեր և կարդացվեր այսպես. «ի լերինս՝ ի ցըրտոյ, ի սովոյ և խստութենէ օգոյն և զզուանցանէին մեռնալք», այսինքն՝ զզուանցանելս պատճառական բայ գոյություն չունի:

«Ըռա, տե՛ս Ըռէ: Սա էր որդի բոա Տուֆոսին (ՄԼԳԳ, 183)»: Այսպիսի բառ նույնպես գոյություն չի ունեցել, պատճառը կրկին սխալ բառանշատումն է, պետք էր կարդալ. «Ըռա-տուֆոսին» — Ռադուֆոսին, Ռուդուֆոսին: Նույնպիսի սխալ կատարվել է նաև Գամբելոյին բառի համար բերված վկայականում մեջ. «մարդիդն, Պրանտայ պուրճին, որոյ աստիճանն է լինել գուճ գամբելոյին. պետք է լիներ՝ մարգիդն Պրանտայպուրճին... գուճա (իմա՝ կոմս). լատիներեն բնագրում այսպես է marchio Brandenburgensis camerarius»:

«Թալբել, ն. Կառավարել, կարգադրել, հրահանգել: Ընտրեաց ծերս Ծ վասն խորհրդեան և թալբելոյ զքաղաքն (ՄԼԳԳ, 9)»: Նոտրդիր տ-ի ձախ ստեղծ առանցքային շատ մոտ է եղել և ընկալվել իրրե ո. պետք էր կարդալ՝ «Թալբելոյ»:

«Կազանի, մ. Գաղտնի կերպով, գաղտնաբար: Բայց միայն ժ այրս, զորս կաղանի արձակեցին, որք ևկեալք իին ի Հոռմ, գոյժ կոտորմանն բերին (ՄԼԳԳ, 16)»: Այսպիսի բառ նույնպես չկա՝ գրչագրական վրիպակ է. մյուս ձևազրկերը (Վենետիկի Ձ 1578, 12ա, ՄՄ Ձ 2027, 11ա) տալիս են ճիշտ ձևը՝ «կենդանի»:

«Կառալ (<պրսկ. քաւ> գ. Յուլ: Ետ շինել... և երկաթի ցուլս կամ կարաւս և եղեալ զցլունքն երկաթի ի վերա սայլից (ՄԼԳԳ, 20)»: Նույնպես գրչական սխալ է. պետք է լինի «կարաս» (Վենետիկի Ձ 1578, 14թ, ՄՄ Ձ 4347, 21թ), առաջին ս-ն ընկալվել է իրրե և:

«Կոզպատնել, ն. Կոզպատով՝ լաշակով փաթթել, ծածկել: Զի կինն կոզպատեալ զլիսով մտցէ յկեղեցի և ո՛ր բացաւ զլիսով (ՄԼԳԳ, 37)»: Կրկին շփոթ է՝ պետք էր կարգալ «կոզպատեալ» (Վենետիկի Ձ 1578, 26ա, ՄՄ Ձ 4347, 21թ), այսինքն՝ զլիսաշորով պետք է ծածկված լինելին նաև այտերը՝ զլիս կոզբեր:

«Կոճայ, ի, ից, գ. Ստեղն (Լրաժշտական գործիք): Սա ևս զերգեհոնսն ստղաց, և հաշտեցոյց համեմատութեամբ երգոցն՝ լինել ձայնիցն հատոր հատոր հնչմամբ յլիւնչս կոճայիցն (ՄԼԳԳ, 95)»: Պետք էր կարդալ «կոճայիցն» (Վենետիկի Ձ 1578, 66ա, ՄՄ Ձ 4347, 100ա), իսկ «կոճայ» բառն է «որպէս թէ կոր ձայ գիրն. անուն խաղի առ Լրաժշտ»—Ոսկիփուր» (ՆՁԲ, Ա, 1130թ):

«Բուճպան, ի, աց, գ. Զիբրի երամակների վերակացու, ձիապան: Գերենիկն ի բունպանաց աւագէն խնդրեալ իւր սուր ձի, եհար զգունդն (Ուռհ. ՆՁԲ)»: Գիտենք, որ Ուռհայեցու ժամանակագրությունը (Վաղարշապատ, 1898) ՄՈՒԺ համառոտագրությամբ օգտագործված է գրախոսվող բառարանում, իսկ այս բառը քաղվել է նոր հայկազյանից, որովհետև նշված համեմատական հրատարակության մեջ նրա փոխարեն այլ բառ է. «բուն պարոնաց» (էջ 32), տողատակում էլ՝ տարբերություններ. «պանաց, պալատաց»:

Կան նաև որոշ թյուր բացատրություններ: Օրինակ. «Ալաման (դերմանացիների ֆրանսիական անվանումը) բառը կազմողների կարծիքով հայերենին փոխանցվել է թուրքերենի միջնորդությամբ. բառահոդվածն ամրապնդված է Ստեփանոս Օրբելյանի, Հեթում Պատմիչի (ավելի ճիշտ՝ Հեթում II Թագավորի) և Ներսէս Պալիանկեցի (մեզ ծանոթ՝ ՄԼԳԳ) վկայություններով. այս հեղինակներից որեւէ մեկն այդ բառը յուրացնելու համար թուրքերենի կարիքը չէր զգում, որովհետև առաջինը եղել է Կիլիկյան Հայաստանում. հաջորդ երկուսը Կիլիկիայում ֆրանցիսկյան կրոնավորներ էին, զննչին էլ վկայակոչված երկը թարգմանում էր Ֆրանսիա»:

լուծ՝ Ավինիոնում: Այսինքն՝ բառը փոխառված է ուղղակի ֆրանսերենից:

«Իսկուկն» բառը բացատրված է՝ «կէս գանգ (ծանրության լափ)» մինչդեռ այսօր էլ մեր խոսակցական լեզվում սովորական է, ա-սենք, «մեղքով» բառը, որը բոլորի կողմից ընկալվում է ոչ թե իրրե կես, այլ՝ մեկուկես մետր: Դրամակցիոն բառն էլ մեկնարանված է. «կէս միավոր» 2,95 գրամ, սակայն Դրամ-մուկէս-ը, որ պետք է ունենար կշռի նախորդ միավորի մեկուկես արժեքը (4,425 գրամ), համարված է. «ծանրության լափ» 2,207 գրամ: «Նաղի» բառը բացատրված է՝ «Ձեթ», «մինչդեռ. սեռ... ձիթապտղի ձեթ, որ է զեթուն եագին (Ալեք. 41)» վկայության համեմատ այս բառը պետք էր բացատրել «լուզ» ձևով, որովհետև «ձեթ» իմաստն ունի միայն «զեթուն եագին» կապակցությունը: Գերմանացի բառի ուղիղ ձև սխալմամբ համարված է. «Գերմանացի, տե՛ս Գերմանացի», իսկ վկայություններն այսպես են.

«և փայտն գերմաստին», «ի գորմաստի փայ-տըն քսէ»: Սրանց ուղիղ ձևն է. «գերմաստի, գերմաստի, գորմաստի», որովհետև այսօր էլ ասում ենք. հաճարի, կաղնի կամ այլ փայտ, իսկ եթե ասենք. հաճար կամ կաղնի, կհաս-կանա՞նք ոչ թե ծառը կամ փայտը, այլ պտուղը. խնձոր և խնձորի նույնպես տարբեր են: Միջին հայերենի բառարանին առաջին հա-տորը տպագրվել է ՀՍՍՀ ԳԱ Հ. Ահառյանի անվան լեզվի ինստիտուտի զույգ՝ Բառարան-գրության և Հայոց լեզվի պատմության բաժին-ների գրախոսության համաձայն, սակայն մաս-նագետ խմբագիր չի ունեցել, այսպես այն գերծ կլինի նշված թերությունների մեծ մասից: Ներկա գրախոսությունն էլ, որ հավատում ենք, թե կրեկավի և կրեդունի այնպես, ինչպիսի մոդուլով այն գրվել է, նպատակ ունի այս վրի-պումներից գերծ տեսնել գոնե ներկորդ հա-տորը:

ՅՈՒ. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Լ. Բ. ՉՈՒԳԱՍՅԱՆ. Գրիգոր Մաղկոզ. Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1986, 158 էջ:

Լ. Չուգասյանի «Գրիգոր Մաղկոզ մենա-գրությունը բաղկացած է «Ներածությունից», երեք գլխից՝ «Բարգմանչաց աղետարանի ու-սումնասիրման պատմությունը», «Մանրանկար-ների պատկերազարկան վերլուծությունը», «Բարգմանչաց աղետարանի մանրանկարների աճական առանձնահատկությունների վերլուծու-թյունը» և «Վերջաբանից»: Բացի դրանից մե-նագրությունն ունի ամփոփում ոտաներեն և ֆրանսերեն, մատենագիտություն (ընդգրկում է 209 կտոր գրականություն հայերեն, հուսերեն և հայկական տարրեր լեզուներով), անձնանուն-ների, տեղանունների և օգտագործված ձևա-գրերի ցանկեր: «Մանրանկարներ» բաժինը ընդգրկում է 69 մանրանկար Բարգմանչաց աղե-տարանից (Մաշտոցի անվան Մատենադարան, ձև. № 2743) և տարրեր ժանրերի 41 պատ-կերներ (մանրանկար, որմնանկար, փղոսկրե հարթաքանդակներ, խճանկարներ), որոնք բեր-ված են իրրե համեմատության նյութ՝ Թարգ-մանչաց աղետարանի պատմական, գեղարվես-տական և պատկերազարկան տեղը աղելի ցա-յունը դարձնելու համար: Ուստի այս բաղա-մանը ցուցադրական նյութը աղելի լավ կլինի տեղանի ոչ թե մանրանկարներ, այլ պատկեր-ներ կամ տախտակներ:

Ներածության մեջ հակիրճ տրվում է XIII դարի 20—40-ական թթ. (ձևագիրը ստեղծվել է 1232 թ.) պատմական զարհուրելի ֆոնը, ապա նկարագրվում է ձևագիրը: Ուշագրավ է, որ աղելի նշվում են կարիքի իրադարձությունները,

ներառված խորհրդիներ, գրավում մե-ղքների կողմից, հայ իշխանների ձեռքով մարդկանց և ձևագրերի աղետումը գերություն-ներից, նրանց փոխադրումը Ելարենից աշխարհ: Մինչդեռ խոսք չկա մեղքների կողմից Անիի գրավման և ամալացման մասին, որ Բաղա-տունների անկումից հետո Հայաստանին հաս-ցրված ամենածանր հարվածն էր: Դրանով հե-ղինակը շեշտում է, որ ինքը հակված է այն հետազոտողների հայտնած կարծիքին, որոնք կարիքը մատենանում են իրրե Բարգմանչաց աղետարանի ստեղծման վայր: Ս. Տեր-Ներսես-յանը գտնում է, որ ձևագրի ստեղծման տեղը հայտնի չէ, բայց անկասկած այն պատկերա-զարդված է Հայաստանի հյուսիսային քաղաք-ներից կամ վանքերից մեկում: Նա նշում է, որ հազուադեպի ծաղերի մշակման, ինչպես նաև պատկերային հուշակոչության մեջ կա նմա-նություն Իզնանի մանրանկարների հետ, որը հիմնականում աշխատում էր Հոռոմոսի վան-քում:

Պատկերազարկումը նվիրված գլուխը բա-ժանված է լուսանկարի ենթագլուխների՝ ըստ մանրանկարչական խմբերի հաջորդականության, որ մեկնադրում է ինքը ձևագիրը՝ խորաներ, անվանաթերթեր, աղետարանի նկարներ, լու-

¹ S. Der Nersessian. La miniature arménienne au XIII siècle — Archeologia, №126 (Janvier 1979) 15 F. p. 21.